

Մեր հաջորդ խոսնակ Սյուզաննա Համֆրիզը (Suzanne Humphries) հնարավոր է ձեզանից շատերի համար ներկայացման կարիք չունի: Նա բժիշկ է, nephrology MD / երիկամների մասնագետ : Նրա կյանքում եկել է մի պահ, երբ հասկացել է, որ մի բան այն չէ պատվաստանյութերի հետ: Աշխարհով մեկ նա հրատարակել է իր աշխատանքները, դասախոսել, կապվել շատ կազմակերպությունների հետ, որոնք բարձրացնում են պատվաստանյութերից տուժած մարդկանց հետաքրքրությունները: Նա ունի շատ դեպքերի մասին տեղեկություն:

Շնորհակալ եմ Թերրիին (Terry) և Էդին (Edie) այս հիանալի գիտաժողովի համար, որը միավորել է ձեզ այս հետաքրքիր քաղաքում: Ես «Լուծարելով պատրանքները» (Dissolving illusions) գրքի միակ հեղինակը չեմ, մյուս համահեղինակը Ռոման Բիստրիանիկն (Roman Bystranyk) է, առանց ում այս գիրքը չէր լինի: Այս գրքում մենք 20 տարվա հետազոտություն ենք կատարել: Երբեմն, երբ նայում եմ այս գրքին, ես մտածում եմ՝ եթե նախօրոք իմանայի, թե այս գիրքը ինչեր է պահանջելու, երբեք չէի գրի այն: Կցանկանայի, որ նա այսօր այստեղ լիներ: Նա էլ ինձ նման արժանի է ձեր ծափահարություններին:

Իմ՝ պատրանքների մասին ուսումնասիրությունները սկսել են 2009 թվականին, երբ իմ հիվանդն ուներ երիկամային անբավարարվածություն: Ես հարցրեցի հիվանդիս, թե ինչու է նա ինձ մոտ, և դիալիզի ինչ միավոր է իր մոտ: Նա չհասկացավ, թե ես ինչ եմ խոսում՝ ասելով, որ նա ներարկումը կատարելուց առաջ չի ունեցել երիկամային խնդիրներ: Ես հարցրեցի նրան ներարկման մասին: Ջրծաղիկի դեմ պատվաստումը, պոլիոն դրոգեին ինձ հետազոտություն կատարել, քանի որ ես գիտեի, որ այս տղան ճիշտ է: Այդ ընթացքում իմ հիվանդների մոտ հայտնաբերեցի խնդիրներ: Երիկամային քրոնիկ հիվանդություն ունեցողների վիճակն ավելի վատացավ պատվաստումից հետո: Ես հայտնաբերեցի, որ հիվանդներին տալով պարզ հարց (Ե՞րբ է եղել ձեր վերջին պատվաստումը)՝ կարելի է բացահայտումներ անել: Այն բժիշկների կողմից հիվանդության պատմության և ֆիզիկական զննման մասն է կազմում: Քանի որ խնդիրների առաջացման ժամանակ ես ոչինչ չգիտեի պատվաստման պատմության կամ բովանդակության մասին, 2008թ-ին հիվանդանոցում ինձ հակադարձեցին: Ես պատասխան հարված տալուն պատրաստ չէի: Եթե ես իմանայի այն, ինչ այսօր ձեզ պատմում եմ, կկարողանայի հաղթել ինձ ուղղված բանավեճը:

Այս տարի, երբ ես Միացյալ Թագավորությունում էի, այցելեցի Լեսթեր (Leicester): Ես այն հայտնաբերել էի Ռոմանի հետ «Լուծարելով պատրանքները» գիրքը գրելու ժամանակ: Այն հայտնի էր պատվաստումների դեմ իրականացրած շարժմամբ: Լեսթերի բնակիչները տարիներ անց՝ 1889 թ-ին, պայքարել են իրենց իրավունքների համար՝ տապալելով պարտադիր պատվաստումը: Շատերը կարծում են, որ ջրծաղիկի պատվաստանյութը ստեղծվել է Էդվարդ Ջենների (Edward Jenner) կողմից, բայց դա այդպես չէ: Ես շատ չեմ խոսի դրա մասին կամ այն մասին, որ Օսմանյան կայսրությունում Ջեններից ավելի շուտ կատարվել են հաջող և ուշադիր պատվաստումներ, ապա դրանք բերվել են Մեծ Բրիտանիա, որտեղ բժիշկները սխալ են կատարել պատվաստումները և առաջացրել վարակներ:

Ջրծաղիկի դեմ պատվաստումն ավելացրել են որպես ջրծաղիկի ոչնչացման հիանալի տարբերակ, բայց դա բոլորովին այդպես չէ: Աննշան օգուտ հնարավոր է՝ եղել է, բայց արժեքավոր հետք չի թողել մարդկության վրա: Ջրծաղիկի դեմ պատվաստումը սարսափելի ցավոտ է, մահացու մղձավանջ է շատ ստացողների համար: Ես կարծում եմ, որ այդ ոչնչացումը տեղի կունենար ավելի վաղ քան 1979-ը, եթե պատվաստումները ավելի վաղ դադարեցվեին: Այսօր ես կխոսեմ ջրծաղիկի կարևորության մասին նույնիսկ պատվաստանյութերի կողմանակիցների հետ այսօրվա պայքարում: Եվ դա առանց պատճառ չէ: Դուք հնարավոր է՝ մտածել եք այս մասին: Այս շինությունը, որ տեսնում եք նկարում՝ իմ ետևում, այսօր տղամարդկանց բանտ է, բայց 1871 թվականին բանտ էր այն հայրերի համար, ովքեր մերժել էին պատվաստել իրենց երեխաներին, ունեին տուգանքեր ու ի վիճակի չէին վճարել: Նրանց բանտարկում էին իրենց պատիժը կրելու համար: 1871 թվականին Լեսթերն ուներ 200 000 բնակչություն, չունեի կոյուղի, մաքուր ջուր և պատվաստման 110% մակարդակ: Բոլորը այդ ժամանակ պատվաստվում էին: 1871 թվականի ջրծաղիկի խիստ համաճարակները տեղի են ունեցել մանրակրկիտ փաստագրված վիճակագրության ժամանակաշրջանի ընթացքում: Հաջորդ 33 տարիները եղել են պաշտոնական պարտադիր պատվաստումների տարիներ: 1871 թվականին տեղի է ունեցել ջրծաղիկի 3000 դեպք, և մահացել է 358 մարդ: Ծնողներն ասում էին պատվաստանյութը, սարսափում էին կողմնակի ազդեցություններից և երեխաների մահվան դեպքերից: Նրանք կարծում էին, որ պատվաստանյութը հիվանդությունից վատ է: 1871 թվականին նրանք ոտքի կանգնեցին՝ ասելով, որ չեն ուզում շարունակել

գոհաբերել իրենց երեխաներին այս զգվելի և մահացու պատվաստանյութին, ինչը ազդեցություն չունի:

Առողջապահության պատասխանատուներն ի պատասխան 1871 թվականի համաճարակին ավելի խիստ օրենքներ գրեցին և հաստատեցին ավելի շատ պատվաստումներ, քանի որ ինչպես հիմա խնդիրը ոչ թե պատվատումն է, այլ մարդիկ, ովքեր կարիք ունեն պատվաստանյութի ավելի շատ չափաբաժնի: Հետապնդումները քաղաքում 1859-1881 թվականներին 2 հոգուց դարձել են 1100 հոգի: 12 տարվա ամբողջական պատկերը հասնում է 6000-ի, որոնցից 64-ը եղել են բանտում, 193-ի գույքն առգրավվել է տուգանքերի փոխարեն: Մինչև 1889 թվականը Լեսթերում երեխաների 15%-ը պատվաստվել էր, և դատարանում հայտնված ծնողներն այնքան շատ էին, որ բանտը նրանց բոլորին չէր կարող ընդունել: Դատարաններն այնքան լցված էին, որ դեպքերի ուսումնասիրությունը իրավականորեն անհնար էր: Այդ ժամանակ ծնողները հանեցին հանրային առողջապահական համակարգի աչքակալները և սկսեցին հավատալ իրենց սրտերին: 1889 թվականին 110 շրջաններ արդյունավետորեն չեղյալ հայտարարեցին ջրծաղիկի դեմ պարտադիր պատվաստումները, քանի որ պատվաստումների դեմ իրականացվող շարժումը միավորված ուժ էր: «Համայնքների տան» (House of Commons) 100 անդամները պատվաստումներին դեմ էին: Իրավական համակարգը գործ ուներ ամբողջ Մեծ Բրիտանիայի ծնողների հետ, ովքեր մերժում էին պատվաստումները:

1871 թվականը պատվաստումների դեմ շարժման սկիզբը չէր: Այն սկսվեց այն ժամանակ, երբ Էդվարդ Ջենները պատրաստեց զգվելի պատվաստանյութը՝ ձիու կամ կովի թարախով պատրաստված: Այն չէր պարունակում ջրծաղիկի վարակը: Մի քանի տարի շարունակ ծնողները հիասթափված էին այս գաղափարից: Ինչպես երևում է 1817 թվականին հրատարակված փաստաթղթից, այս պատվաստանյութի զարգացումից միայն 20 տարի անց ծնողները լցվեցին տագնապով և վախով: Ծնողները գիտեին, որ պատվաստանյութը առողջ երեխաների մոտ կարող է առաջացնել հիվանդություն և հանգեցնել մահվան: Բժիշկները պատվաստում ստացած երեխաների մոտ նկատում էին լուրջ հիվանդություններ, սեպսիս (sepsis), լուրջ մաշկային խանգարումներ և ջրծաղիկ:

Ջեններյան հանձնաժողովը (The Jennerian committee) դեռ մեղադրում է բժիշկներին և հաղորդում կովի թարախի պատվաստման խնդիրների մասին, որի ազդեցությամբ նկատվում է այլասերվածություն և խեղաթյուրված դեպքեր:

Ջեններյան հանձնաժողովը երբեք չի պատասխանել պատվաստումներին դեմ գնացող բժիշկներին, այլ ծաղրել է և թույն թափել այն մարդու ուղղությամբ, ով կասկածել է պատվաստման գործընթացին: Այս ամենը ակնհայտ է դառնում, երբ ուսումնասիրում ես բժշկական գրականությունը, բայց իմ նախկին գործընկերներն ու այսօրվա քննադատները չեն պատրաստվում անել դա: Փոխարենը նրանք 200 տարվա ավանդույթն են առաջ քաշում՝ խոսելով անհեթեթություններ պատվաստման ռիսկերի և արդյունավետության մասին: Այսօր էլ կան ճշգրիտ մեղադրանքներ, որոնք պատասխանի արժանի չեն: Մենք այն մարդկանցից ենք, ովքեր վերցնում են գրքերն ու պատմական գրառումները, շարունակում փորձել իմաստ և գիտելիք բերել այս խելագար երկխոսության մեջ:

Հեզնանքը նրանում է, որ այս թեմայով ձայն բարձրացնողներից շատերը հստակ չգիտեն, թե որտեղից պետք է սկսեն հետազոտությունը պատվաստումների դեմ իրականացվող շարժման առաջացման պատճառներն իմանալու համար: Սփոփիչ է իմանալը, որ ազնիվ, լայնամիտ բժիշկներն անցյալում տանջվել են իմ նման, երբ տեսել են պատվաստանյութի ազդեցությունը հիվանդների վրա և քննարկել դրանք հիվանդանոցի ադմինիստրացիայի ղեկավարների հետ: Այդ ժամանակ ես պատմություն չգիտեի: Ես մտածում էի, որ ադմինիստրացիան կցանկանա իմանալ, որ պատվաստանյութերը առաջացնում են խնդիրներ և դիալիզ կամ վատացնում երիկամային գործառույթները: Նրանց պատասխանը ինձ շոկի ենթարկեց: Ամեն անգամ, երբ ես խոսում էի գրիպի և թոքաբորբի դեմ պատվաստանյութերի օգտագործման անմտության մասին սրտի կաթված, լեյկոզ, երիկամային անբավարարվածություն ունեցող հիվանդների դեպքում կամ ինչ-որ մեկի, ով ունի լուրջ սեպսիս, նրանք պատասխանում էին, որ ջրծաղիկի դեմ պատվաստանյութը փրկել է աշխարհը: Ամեն անգամ, երբ ես փորձում էի նրանց ասել, որ ես խոսում եմ գրիպի և թոքաբորբի դեմ օգտագործվող պատվաստանյութերի մասին, նրանք անում էին նույն բանը, ինչ հիմա անում են իմ հիվանդները՝ ասելով որ խոսենք ջրծաղիկի կամ պոլիոյի մասին:

Եթե ես ասեի, որ ստատինները (statins), անգիոտենսինի վերափոխող ֆերմենտային խանգարողները (ACE inhibitors), ոչ ստերոիդային հակաբորբոքային նյութերը (non-steroidal anti-inflammatory agents) առաջացնում են երիկամային խնդիրներ, հիվանդանոցի ադմինիստրացիայի

իմ հասակակիցները կասեին, որ կարող են դադարեցնել դեղեր օգտագործելը, բայց պատվաստանյութը այլ պատմություն է, որին նրանք պատրաստ չեն: Եթե ուզում եք ավելին իմանալ բժշկական համակարգում իմ փորձառության մասին, կարող եք կարդալ իմ գիրքը (Rising from the dead): Այն ընդգրկում է 1989-2013 թվականները, բացահայտում, թե ինչպես ես արթնացա մի օր, միացրեցի տարբեր մասերն իրար: Ներկայացնում է նաև բժիշկներին, որոնց ուղեղները լվացված էին ստանդարտներով:

Ես կպատմեմ ջրծաղիկի մասին պատմություն, որը ես չգիտեի, երբ հիվանդանոցի բժիշկները հիմարություններ էին խոսում: Ես կսկսեմ 2002 թվականից: Մի օր ինձ նամակ եկավ, ես այն չպահպանեցի, քանի որ չգիտեի ապագայում դրա կարևորության մասին: Նամակը ջրծաղիկի դեմ պատվաստմանը մասնակցելու հրավեր էր, քանի որ առաջին ստացողները և կամավորները պատվաստվում էին, և հիվանդանոցը կարիք ուներ անձեռնմխելի բժշկի, որպեսզի պայքարեր պատվաստանյութերից առաջացած վարակների և վնասակար ռեակցիաների դեմ: Քանի որ ես ոչինչ չգիտեի պատվաստանյութերի մասին, ծիծաղեցի և աղբամանը նետեցի թուղթը: Իմ բանական ուղեղը և ինտուիցիան ինձ ստիպեցին ուսումնասիրել պատվաստանյութերը, որպեսզի կարողանայի պաշտպանել պատվաստված մարդկանց պատվաստանյութերի վնասակար ազդեցություններից: Այդ ժամանակ ես շատ զբաղված էի փրկելով մարդկանց, ովքեր ունեին երիկամային անբավարարվածություն և խմում էին մկնդեղով սուրճ, երբ հավաքվում էին հյուսիսային Մեյնի (Maine) եկեղեցիներից մեկում: Այսպիսով, ես ունեի հրատապ խնդիրներ:

Ինչպե՞ս առաջացավ ջրծաղիկի դեմ պատվաստանյութի կարիք 2003 թվականին: 1991 թվականին Ամերիկյան որոշեց ներխուժել Իրաք, ապա տեղի ունեցավ սեպտեմբերի 11-ը, զանգվածային ոչնչացման առասպելական զենքերի պատճառով նախկին «ընկերը» վերածվեց թշնամու: Երբ նորից հարձակում եղավ Իրաքի վրա, Կենտրոնական հետախուզական գործակալությունը մտածեց ավելի լավ բան, քան զանգվածային ոչնչացման զենքերը: Այն հայտարարեց, որ ահաբեկիչները ջրծաղիկի մահացու պաշար են գործադրել ամերիկացիների կյանքերը խորտակելու համար, բայց իհարկե Ռուսաստանն էր դա արել: Նախկինում հայտնի ռուս գիտնականը Իրաքին տրամադրել էր ջրծաղիկի վիրուսային տեսակներ: Կենտրոնական հետախուզական գործակալությունը և Հետաքննությունների դաշնային բյուրոն

բացահայտեցին այս փաստը, և նախագահ Բուշը որոշեց պատվաստել ամբողջ բնակչությանը՝ դադարեցնելու համար Իրաքի ահաբեկիչների կողմից տարածած ջրծաղիկի ահաբեկչությունը:

Արդյո՞ք ջրծաղիկի դեմ պատվաստումը միակն է, որ ոչնչացնում է մարդկության մանրէները: Այն ապահով է և արդյունավետ, այդպե՞ս չէ: Նրանք, ովքեր անցյալում վիճել են սրա դեմ, եղել են պատվաստումներին դեմ հիմարներ և չեն ունեցել գիտության մասին բավական հասկացողություն:

Նախագահ Բուշը հայտարարում է բազմաշերտ համաժողովրդական արշավ՝ սկսելով հիվանդանոցների բժիշկներից: Հրատապ էր վիճակը, քանի որ այսօրվա «վատ մարդիկ» փորձում են ջրծաղիկի դեմ պատվաստանյութը դարձնել մահացու և բուժման համար դիմացկուն: «Թայմ» ամսագիրը (Time magazine), հետևելով նախագահ Բուշին, խանդավառությամբ հրապարակում էր ավելի շատ վախով լեցուն նորություններ և հասարակությանը «լավ քաղաքացի» դառնալու կոչ էր անում: Սանջայ Գուպտան (Sanjay Gupta) համաձայն էր դրա հետ և մեջբերում է Ռոբերտ Վուդ Ջոնսոնի (Robert Wood Johnson) ուսումնասիրությունը, որը ցույց էր տալիս, որ Ամերիկայի 2/3-ը, թվում էր, համաձայն էին հիվանդության համար իրենց կյանքը վտանգելուն: Ջարմանալի է, թե ինչ տեղեկատվություն է տրվել հարցումն անցած մարդկանց: Քննադատելով նրանց, ովքեր համաձայն չէին՝ Գուպտան ասել է, որ նույնիսկ պատվաստման ուշ ստանալու դեպքում այն պաշտպանում է հիվանդությունից: Վարակվելուց հետո՝ 2-3 օրվա ընթացքում, կարելի է կատարել ներարկում:

Բացի դրանից Իմունիզացիայի պրակտիկայի խորհրդատվական հանձնաժողովը (ACIP) դրանից 6 ամիս առաջ ասել է, որ պատվաստանյութը հասանելի կլինի բոլոր ամերիկացիների համար մինչև 2002 թվականը: «Վաշինգտոն Փոստում» Ջուլի Գերբերդինգը (Julie Gerberding) հաղորդում էր, որ այսպիսի ծրագիրը կբարձրացնի երկրի պատրաստակամությունը ահաբեկիչների դեմ գործելու և բնականորեն տեղի ունեցող արտակարգ իրավիճակների դեպքում, և ինչու ոչ այն խանդավառ լինելու կոչ էր:

Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոններն (CDC) ամբողջովին կորցրեցին իրենց հեղինակությունը 1976 թվականին, երբ խոզի գրիպի արտակարգ իրավիճակներ տեղի չունեցան: Հասարակությանը նախազգուշացրեցին, որ 1918 թվականի նման տեղի կունենա գրիպի համաճարակ: Սրան հաջորդեց խուճապը: 45 միլիոն մարդ 4 շաբաթվա

ընթացքում պատվաստվեցին խոզի գրիպի դեմ: Կառավարության ստանդարտներով որակավորված մարդկանց պաշտոնական թիվը, ովքեր ունեին Գիլեն-Բարեի համախտանիշ (Guillain-Barré (gee-YAH-buh-RAY)), կազմում էր ավելի քան 200: Նրանցից 11-ը մահացել էր: Պատվաստումից 2 կամ 3 շաբաթ անց մի խումբ դեպքեր էին գրանցվել: Ոչ ուշադիր պլանավորված արշավը պիտակավորվել էր որպես անհաջողություն: Այդ տարի միայն 1 մարդ մահացավ խոզի գրիպից:

Բժշկության ինստիտուտն (Institute of Medicine) այսօր համաձայն է այն մտքի հետ, որ պատվաստանյութը հանգեցնում է Գիլեն-Բարեի համախտանիշի ռիսկի մեծացման: 2013 թվականին Գերբերդինգը հակված էր վերականգնել հավատը համաժողովրդական հաջողակ պատվաստման արշավի հանդեպ, ինչը նորից կփրկեր աշխարհն ահաբեկիչներից և պանդեմիկ մանրէներից: Ինչպիսի հիանալի ազգակառուցման ձև, այնպե՞ս չէ: Հասարակությունը հակված էր հավատալ, որ այս կարգի պատկեր նկատվում է պոլիո վիրուսի ազդեցությամբ, և միակ կենսունակ լուծումը պատվաստումն է: Սա կարող է դաժան թվալ մարդկանց համար, ովքեր չեն կատարել հետազոտություն և կարդացել «Լուծարելով պատրանքները»: Ես երաշխավորում եմ, որ եթե այդ գրքում 60 էջ կարդաք պոլիոյի պատվաստանյութի մասին, կհասկանաք այդ պնդումը: Այս պատկերներն օգտագործվում էին աշխարհի ծնողների մոտ վախ առաջացնելու համար:

Վերադառնանք 2003 թվական, երբ հասարակությունը վերահաստատեց պատմությունները, թե ինչքան հիանալի էր Ջենները, ինչքան անհավանական էր Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը (World Health Organization), ջրծաղիկի ոչնչացման արշավը, ջրծաղիկի պատվաստանյութը: Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոնների (CDC) դռների ետևում գործում էր փոքր դատական մարմին: Իմունիզացիայի պրակտիկայի խորհրդատվական հանձնաժողովը և ջրծաղիկի բուժման աշխարհի ամենափորձառու բժիշկ Թոմաս Մակն (Thomas Mack) այլ պատկեր են ցույց տվել: Նա համաձայն չէր անտեղյակ մարդկանց հետ և ասում էր, որ առանց պատվաստման էլ ջրծաղիկը կանցնի, և ամերիկացիներին առանց իմունային գլոբուլինի պատվաստելը չափազանց վտանգավոր է: Համատեքստում դնելով այս ամենը՝ հասկանում ենք, թե ինչու էին 1880 թվականին Լեսթերում ծնողներն ապստամբում պատվաստումների դեմ:

Նկարում «լավ» պատվաստման արդյունքում երեխայի թևն է՝ լի կտրվածքներով: Հիշեք, որ այս մարդիկ ապրել են գերբնակեցված քաղաքներում, որտեղ զզվելի ջրեր, ահավոր կեղտաջրեր էին, չկային կոյուղիներ, ստերիլ հանդերձանքներ: Այստեղ կարմրախտը և տիֆն ավելի շատ վախ էր տարածում, քան ջրծաղիկը: Պատմական գրառումները ցույց են տալիս, թե ինչքան ցավոտ և քոր առաջացնող էր ջրծաղիկի պատվաստումը: Բայց 2002 թվականին բժիշկ Մակը Իմունիզացիայի պրակտիկայի խորհրդատվական հանձնաժողովին պատմել է, որ սովորական ջրծաղիկի ժամանակ պատվաստում ստանալու դեպքում ցածր է մահվան մակարդակը, բայց պատվաստանյութը չի պաշտպանում ջրծաղիկի ծանր արտահայտման դեպքում: Ըստ նրա՝ աշխարհահռչակ մեկ այլ պատվաստման արշավ սկսելն անսահման տառապանք կբերի տասնյակ հազարավոր մարդկանց: Դա պետք է իրականացնել այն ժամանակ, երբ լավ սանիտարական վիճակ, հակաբիոտիկներ, ստերիլ վիրակապեր լինեն, և այդ ամենը հիվանդի համար հարմարավետություն կստեղծի: Պատկերացրեք, թե ինչի նման կլինեին պատվաստումները Մեծ Բրիտանիայում աղբահորերի (cesspits) առկայությամբ 1800-1880-ականներին:

Երբ հասարակությունը կանչում է բժիշկ Մակին հերթապահության, նա ասում է Իմունիզացիայի պրակտիկայի խորհրդատվական հանձնաժողովին՝ ինչու ջրծաղիկն այլևս չի վերադառնա: Ըստ նրա՝ այն վերացել է տնտեսական զարգացման արդյունքում, այլ ոչ թե պատվաստանյութերի: Սա այն չէ, ինչով մեր ուղեղները լվացել են բժշկական համալսարանում: Բժիշկ Մակն ապա նշել է, որ հասարակությունն աննշան ռիսկեր է ունենում ջրծաղիկից և էական ռիսկեր՝ պատվաստումներից: Այդ ռիսկերը գերազանցում են օգուտները: Յուրաքանչյուր ռեակցիա, որ վերագրվում է ջրծաղիկի դեմ պատվաստանյութին, կարող է հանգեցնել նրան, որ մարդիկ մերժեն դա, սա է պատճառը, որ պատվաստանյութերի ոչ մի ռեակցիա չի կարող ընդունվել հանրայնորեն:

Ո՞վ է բժիշկ Մակը: Նա այն բժիշկն է, ով աշխատել է մարդկանց մոտ ջրծաղիկի բռնկումների վրա, ունի հսկայական փորձ այդ ոլորտում, ինչը Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոնների և Իմունիզացիայի պրակտիկայի խորհրդատվական հանձնաժողովի ղեկավարությունից ոչ մեկ չի ունեցել: Այդ պատճառով էլ նրա գիտելիքը հաճելի չէր «Նոր Անգլիայի բժշկական ամսագրին» (New England Journal of



Medicine), որն էլ նրա տեսակետը հրապարակում էր փոփոխված ձևով: Այսպիսով, ի՞նչ է դա նշանակում: Նրանք, ովքեր զգոն են և դուրս են գալիս գոմբինների գծերից, միշտ մեղադրվում են՝ լինելով փոքր բայց վոկալ փոքրամասնություն:

Մակը բացատրում էր, որ ջրծաղիկն այդքան վարակ չի առաջացնում, ինչքան հասարակությունն է կարծում: Նա ասել է, որ ջրծաղիկը ոչնչացված է, քանի որ փոխանցման շղթան խոցելի է: Տարածումը սահմանափակ է, և այն չի կարող տարածվել օդով: Ջրծաղիկը տարածվում է միայն կարճ տարածության դեպքում, ավելի շատ անկողնային ձևով: Չնայած ցածր իմունիտետը վերացել է, կարանտինը միշտ լավ է աշխատել: Նշեմ երկու հետաքրքիր կետեր: Հիվանդանոցները եղել են հիմնական տարածման կետերը և բարդությունները կլինեն մի քանի անգամ ընդհանուր ինչպես նախկինում: Ինչպե՞ս կարող են ժամանակակից երկրորդ սերունդի պատվաստանյութերը լինել ավելի վտանգավոր քան 1800-ականների պատվաստանյութերը: Նա բացատրեց նաև, որ հասարակությանը մատուցվում էր սուտը ոչ միայն հիմնական լրատվամիջոցների միջոցով, այլ նաև տեղի էին ունենում միջազգային բիոահաբեկչական հանդիպումներ: Նա մասնակցել է բիոահաբեկչական հանդիպման տեսական քննարկմանը, որին մասնակցել են հյուսիսային ամերիկացի և եվրոպացի քաղաքական գործիչները: Ըստ նրա՝ մասնակիցները մատուցում էին անհեթեթություն: Ջրծաղիկի թեմայով ամենափորձառու կենսաբանն աշխարհում ասել է, որ ջրծաղիկի պանդեմիկ տարածվածության դեպքում հանրային առողջության սովորական մեթոդները չեն կառավարի յուրաքանչյուր բռնկում և պատվաստանյութի պաշարներն անկասկած հսկողության բանալին չեն: Հասարակությունն էլ չէր գիտակցում, որ նրանք անմտություններ են խոսում: Կատարվել են որոշ ուսումնասիրություններ ամենալավ պատվաստումների համար:

Ամենաառողջ համալսարանականները, այս պատվաստումը ստանալով, չունեին նույնիսկ մեկ առողջական արատ, ինչը զարմացրել էր հետազոտողներին: Այն ավելի լավ արդյունքներ տվեց, եթե հաշվի առնենք այսօրվա ջրծաղիկի դեմ թվացյալ լավ պատվաստումների ծանր ռեակցիաները: Ֆաուչին (Fauci) սա բացատրում էր որպես մի բան, որ հանդուրժել են կամ անտեսել անցյալում: Վալտեր Օրենշտեյնը (Walter Orenstein) մեծ փորձ ուներ պատվաստումների ոլորտում: Նա պատվաստում ստացողների մոտ ականատես է եղել պատվաստումների շատ զգվելի ռեակցիաների, ինչը

արտահայտվել է թնի վրա կարմիր շերտերով: Վերջիններս սկսել են հակաբիոտիկներ օգտագործել: Պատվաստում ստացած այդ մարդիկ կարիք ունեն սիրո և խնամքի:

Նա ասել է, որ 1800-ականներին ծնողները ճիշտ էին: Այս պատվաստանյութը կարող է և կառաջացնի խնդիրներ: Նյու Յորք Թայմսի (The New York Times) խմբագիր Մայքլ Պոլլաքն (Michael Pollack) ասում էր, որ 1947 թվականին նա ջրծաղիկի պատվաստանյութի պատճառով քիչ է մնացել մահանար ուղեղի էնցեֆալիտից: Նա պատվաստվել է 6 ամսական հասակում: Նա թերթերում գրել էր, որ եթե նույնիսկ ամերիկացիների 2/3-ին կատարեին ջրծաղիկի դեմ ժամանակակից պատվաստում, կլինեին 200 հոգի առողջ մարդիկ, 85 մահ, 4600 կողմնակի ազդեցություններ: Հիշում եք նամակը, որ ստացել էի 2002 թվականին: Ցույց տալու համար այդ ամենի իրական լինելը ես գտել եմ Իլինոյս նահանգի (Illinois state) տեղեկատվական փաթեթը, որ ուղարկել են Իլինոյսի բժիշկները: Վերջիններս 2003 թվականին կողմ էին պատվաստանյութերին: 63 էջանոց փաթեթը տեղեկատվության համաձայնության հիանալի փաթեթ է: Այն առաջարկում է բոլորին լինել զգուշավոր և իրենց սիրելիներին լուրջ վնասակար ռեակցիաների ռիսկի չենթարկել:

Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոնների ղեկավար Ջուլի Գերբերդինգը առաջարկեց միանալ իրենց և կատարել ջրծաղիկի դեմ պատվաստումներ: Նամակում ասվում էր, որ այս որոշումը պետք է կայացվի գիտակցաբար: Ըստ 63 էջանոց դոսյեի՝ նոր կողմնակի ազդեցություններ կնկատվեն, օրինակ՝ միոկարդիտ (սրտամկանի բորբոքում), պերիկարդիտ (pericarditis), անգինա, սրտի կաթված: Այդ փաթեթում հնարավոր մահացու և շատ թուլացնող կողմնակի ազդեցությունների երկար ցուցակ կար: Առաջին պատասխան թիրախը 500 000 էր:

Մինչև 2004 թվականի վերջ 40 00 մարդ կամավոր եղավ, և դա մի փոքր զարմանալի էր: Բժիկներն ասում էին, որ եթե իմանային սրտի հիվանդությունների մասին, պատվաստումներ չէին կատարի: Արյան ճնշումը, խոլեստերինը, շաքարային դիաբետը նույնպես կարող էին լինել հարաբերական հակացուցումներ: Եթե ես կամավոր լինեի 2002 թվականին ջրծաղիկի դեմ պատվաստման համար, ես ստացած կլինեի այս կարգի մանրամասն տեղեկատվություն: Այնուամենայնիվ, սա շատ զզվելի պատվաստանյութ է: Մենք բոլորս գիտենք դա, բայց պատկերացրեք՝ ինչ

կլիներ, եթե բժիշկների 1/3-ը, ովքեր ստացել են պատվաստում, չաշխատեին: Համակարգը ճնշման տակ է եղել, սա խնդիր չի համարվել այն ժամանակ, երբ երեխան հիվանդացել է, երբ ջրծաղիկը ենթադրաբար ոչնչացվել էր պատվաստանյութի կողմից:

1800-ականների երեխաները ստիպված էին հարմարվել միջավայրին: 12 տարի անց՝ 2015 թվականին, մեզ ասում էին, որ ջրծաղիկի դեմ պատվաստանյութից հետո էլ հաճախակի էին տեղի ունենում կրծքավանդակի ցավ, թոքախտ, սրտի պալպիտացիա, և միոկարդիտը և պերիկարդիտը 200 անգամ ավելի շատ էր, քան բնակչության մակարդակը: Ենթակլինիկական միոկարդիտը գնահատվում էր սրտի ֆերմենտը ստուգելով: Արյան մակարդակը 60 անգամ բարձր էր, քան բացահայտ կլինիկական դեպքերի մակարդակը: Ժամանակակից ավելի լավ պատվաստանյութը մինչև հիմա այդքան էլ լավը չի: 2016 թվականին բժիշկ Վոյթը (Voight) ցույց տվեց, որ ջրծաղիկի դեմ պատվաստում ստացողների մոտ կարդիտի մակարդակը 7.4 անգամ շատ էր, քան պատվաստում չստացածների մոտ: Նա չգիտեր, թե ինչու էր դա այդպես: Եթե նրանք 2016 թվականին չգիտեին, ապա ի՞նչ էք կարծում բժիշկները 1850 թվականին ախտորոշել էին այն, կամ գիտեին, թե ինչու է դա կատարվում: Այդ բժիշկը գիտեր սրտի վիճակները ինչպես ախտորոշել հին պատվաստանյութից հետո: Ինչքան երեխաների սրտեր են կանգնել պատվաստումից հետո, և նրանց ծնողները չեն հասկացել այդ համընկնումը:

Դուք չէիք զարմանա այն ամենից, ինչ ես ասում եմ, եթե իմանայիք 1967 թվականին Դել Կամպոյում (Del Campo) արված ուսումնասիրության մասին: 1967 թվականին, երբ այն հրապարակվեց, պատվաստման ծրագիրը այժմյան պատվաստման մի հատվածն էր ներառում միայն: Հուսով եմ, որ հիմա պատվաստանյութերը մի փոքր ավելի նորմալ են, քան ջրծաղիկի դեմ հին պատվաստանյութերը: Սա անգլերենով հոդված է, որն իր մեջ պարունակում է իտալական 12 հոդվածներ: Դրանք հրապարակվել են 5 տարեկան 200 երեխաների և մեծերի արդեն զարգացած իմունային համակարգի խորքային վերլուծության արդյունքում: Այսպես է մարմինը փորձում ընդունել մանրէային, վիրուսային, քիմիական, թունավոր տրավմաները նոր ավելի լավ պատվաստանյութերի դեպքում:

Վերադառնանք ջրծաղիկին, երբ 2003 թվականին նրանք հաշվի չէին առնում թույլ ամերիկացիների 33%-ին և ակնկալում 4600 լուրջ կողմնակի ազդեցություններ, 285 մահ: Սա էլ ընտրված առողջ պատվաստանյութերի

դեպքում, երբ կատարվել էր հետազոտություն և օգտագործվել ջրծաղիկի դեմ ենթադրաբար նոր ապահով և հիանալի պատվաստանյութը առողջ մարդկանց վրա: Մահը և լուրջ ռեակցիաները եղել են հարյուրամյակներ առաջ, երբ բոլոր մեծերը և երիտասարդները պատվաստվել են առանց հաշվի առնելու առողջական վիճակները, և պատվաստումից հետո խնամք տեղի չի ունեցել:

Մենք գիտենք, որ 1971 թվականի անգլիական համաճարակի ժամանակ պատվաստված հազարավոր մարդիկ ջրծաղիկ են ունեցել և հազարավորներն էլ մահացել են: Ըստ գրառումների՝ այդ ժամանակ Ամերիկայի բնակչության մեծ մասը պատվաստվում էր: Անգլիայի 110 շրջանների բնակչությունն ընթուստանում է պարտադիր պատվաստման դեմ: Նրանք տեսնում են, որ համաճարակի ժամանակ պատվաստանյութը իր արդյունքը չի տալիս: Հասկանում են նաև, որ իրենց երեխաների վնասները և մահերն ամեն տարի շատանում են: Օգուտներն ավելին չէին, քան ռիսկերը: Ծնողները, ովքեր ականատես եղան իրենց երեխաների մոտ վնասներին, սկսեցին պայքարել պատվաստումների դեմ: Նրանք ցածր IQ-ով անկիրթ խելագարներ չէին, չունեին սահմանափակ ճանաչողության բարդություն (limited cognitive complexity), այսօրվա մտածողության ձև, ըստ որի՝ այսօրվա պատվաստանյութը քահանայապետ է նրանց հանդեպ, ովքեր չեն խոնարհվում պատվաստման զոհասեղանի առջև: Փաստացի այսօրվա հանդիաստեսը ավելի բարձր ճանաչողության բարդություն ունի, քան պատվաստանյութերն առաջ տանող շատ բժիշկներ:

Բժշկական կրթություն ունենալով՝ ես ձեզ կարող եմ ասել, որ այն չի պահանջում ճանաչողության բարդություն, այլ աշխատասիրություն, քրտնաջան աշխատանք, լավ հետևող լինելու կարողություն: 1800-ականների ծնողները գիտեին, որ իրենց երեխաները պատվաստվում են և մահանում պատվաստանյութերից: Նրանք կարծում էին, որ արժե կատարել պատվաստում, ինչպես ձեզանից շատերը, բայց տեսնելով, որ դա այդպես չէ, դադարեցին պատվաստումներ ընդունել: Նրանք գիտեին, որ ոչ միայն երեխաներն էին մահանում, այլ նաև մեծահասակները, ովքեր հաճախակի պատվաստումներ էին ստանում: Վառ օրինակ է Էդվին Բոքսը (Edwin Cox), ով պատվաստվել էր երեխա ժամանակ: Նա պատվաստումների խանդավառ կողմնակից էր և հասուն տարիքում՝ 1868 թվականին, նորից պատվաստում ստացավ: Արդյունքում նա սկսեց դեմ արտահայտվել պատվաստումներին: Մա

հին գրականության միայն մեկ դեպք է, և սա այն է, ինչ մենք այսօր տեսնում ենք ամբողջ աշխարհում:

Այս պատմությունները պատմում են մարդիկ, ովքեր կողմ են եղել պատվաստումներին, պատվաստվել են և տառապել դրանից: Երբ մենք՝ որպես բժիշկներ, հաղորդում ենք պատվաստանյութերի ռեակցիաների մասին, կամ նույնիսկ փորձում տալ հարցեր պատվաստանյութի մասին, մեզ վերաբերվում են որպես հանցագործների: Արդյունքում բժիշկներն անում են երկու բան: Նրանք անում են այն, ինչ իրենց ասել են և լռում, կամ թողնում են իրենց հիմնական աշխատանքը: Ես միշտ հիշեցնում եմ պատվաստանյութերին դեմ արտահայտվող մոլեռանդներին: Նրանց անունները գրված են այս ավտոբուսի վրա: Պատվաստմանը կողմ ծնողներն իրենց երեխաներին պատվաստել են (գարդասիլի դեմ (gardasil) պատվաստում, գրիպի դեմ պատվաստում, դիֆթերիայի, պերտուսիսի և տետանուսի (DPT) դեմ պատվաստում, կարմրուկի, խոզուկի և կարմրախտի (MMR) դեմ պատվաստում), և արդյունքում պատվաստումից հետո գրանցվել է մահվան դեպքերի և անընդունակությունների այս պատկերը:

1817 թվականի նման 200 տարի անց՝ 2017 թվականին, ծնողները հանդիպում են հայհոյանքների, ծաղրի դառնությանը: Երբ նրանք բժիշկներին կամ հանրությանը ներկայացնում էին իրենց կասկածները, նրանց վերաբերվում էին որպես այլասերվածների: 2003 թվականի ջրծաղիկի դեմ պատվաստման արշավը տեղի չունեցավ ԱՄՆ-ում, քանի որ պատվաստանյութի քահանայապետերը վախեցան այսպիսի իրավիճակներից: Ավտոբուսի վրայի անունները հնարավոր է հասարակությունն է արել՝ պատվաստման ծրագրերի հանդեպ կասկածներ առաջացնելու համար: Նույնիսկ 2002 թվականին բժշկական պլանավորողները նահանջ էին տվել՝ այս ուղղությունները համարելով հիստերիա:

Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոնները չէին կարող հասարակությանը ճշմարտությունը պատմել, քանի որ 200 տարվա բժշկական պատմությունը մշակված առասպել ուներ, որ ջրծաղիկի դեմ պատվաստանյութը ապահով է և արդյունավետ, այն կվերացնի հիվանդությունը երկրի երեսից և դրանից տուժած մարդկանց հազվադեպ դեպքեր կլինեն: Նրանք ունեին ուղեղը լվացած հասարակություն, որ հավատում էր պատվաստումների դեմ իրականացվող շարժումը տաք օդ է՝

ստեղծված հիստերիկ բնագետների կողմից, ովքեր չէին հասկանում ժամանակակից բժշկությունը:

Պաուլ Օֆֆիթը (Paul Offit) դեռ մեղադրում էր անցյալի մարդկանց, ովքեր կասկածում էին ջրծաղիկի դեմ պատվաստանյութի վնասներին: Ես նկատեցի, որ նա դա անում էր անցյալ տարի, երբ Նյու Յորքի համալսարանի բժշկական դպրոցի (NYU Medical School) դահլիճում դասախոսության էր: Նա աուտիզմ ունեցող ծնողներին ասում էր, որ իրական խնդիրն այն է, որ աուտիզմ ունեցող երեխաների ծնողները չեն հասկանում, որ պատվաստանյութերը չեն կանխում աուտիզմը: 2002 թվականին Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոնները դիմակայում էին իրենց բժիշկներին՝ հիշեցնելով նրանց, որ ջրծաղիկի դեմ պատվաստանյութը չի վերացրել հիվանդությունը և արդյունավետ չի եղել, հատկապես ջրծաղիկի ամենավատ տեսակի համար: Ավելի վատ, այն ապահով չի եղել նույնիսկ առողջ մարդկանց համար:

Իրականությունն այն է, որ եթե ջրծաղիկի զինված տեսակն ազատ արձակվեր, այն կլիներ ջրծաղիկի ամենավատ տեսակը: Պարտեզի խխունջի բազմազանությունը և պատվաստանյութը չէին օգնի:

Որպես դիվերսիոն մարտավարություն՝ նրանք վիճում էին հետախուզական տեղեկատվության հիմնավորության շուրջ: Բժիշկները 500.000 մարդու պատվաստեցին և արդյունքում շատ մարդիկ մահացան: Ապա ամբողջ բնակչությունը հանկարծ հասկացավ, որ նրանք իրենց ստել էին ջրծաղիկի պատվաստանյութի հիանալի լինելու մասին: Անցած 200 տարվա ստերն այլևս չեն կարող օգտագործվել մեր դեմ, ովքեր տեսնում են այսօրվա ենթադրաբար հիանալի պատվաստանյութերի իրական խնդիրները:

Իրականությունը Դել Կամպոն (Del Campo) նկարագրել է, և պատվաստում չստացած մարդկանց այսօրվա բոլոր գրառումներն արդեն վառվող կրակը թեժացնում են: Ապա նրանք սկսեցին վախենալ պատվաստանյութերի ռեակցիաների մեծ քանակությունից և առողջ մարդկանցից, ովքեր իրենց վրդովմունք էին արտահայտում հասարակությանը պատվաստանյութերի մասին: Երբ բժիշկներին հարցնում էին, թե ինչու են նրանք վախեցած, նրանք պատասխանում էին մեկ բառով (փորձառություն): Հիմա ետ գնանք և նայենք փորձառության որոշ դեպքեր, որոնք նրանք չեն բացահայտում հասարակության համար:

Բժիշկ Դվորեցկին (doctor Dvoretzky) 2002 թվականին նրանց պատմեց, թե ինչ է տեղի ունեցել պատվաստված ռազմական զորքերի հետ: 1949 թվականին ջրծաղիկի հիվանդությունից նրանցից շատերը մահացան: Շատերի մոտ էլ ջրծաղիկն այնքան ցավոտ էր, որ միայն մորֆինն էր մի փոքր թեթևացնում ցավը: Բոլորը զարմացել էին, որ պատվաստանյութը չի օգնել: Ապա նա խոսեց հիվանդանոցի անձնակազմի անդամների՝ նորից պատվաստում ստանալու և դրանց սարսափելի ռեակցիաների մասին: Դա տեղի ունեցավ, քանի որ պատվաստանյութը ապականված էր: Հնարավոր է՝ նա զարմացած էր, քայքայեթ նա նայեր «Լանցետ» ամսագրի (The Lancet journal) հոդվածները, բժիշկ Բեյլիի (dr. Bailey) Երկրորդ համաշխարհային պատերազմից տասնամյակ առաջ հրապարակած ելույթը, նա կհասկանար, որ նա մենակ չէր 1940 թվականին: Այդ ժամանակ շատ զինվորներ հիվանդացել էին: 1944 թվականի նոյեմբերին «Լանցետը» ներկայացրել էր մեկ այլ ռազմական հիվանդանոցում ջրծաղիկի անընդմեջ դեպքերի մասին: Այդ ժամանակ մարդիկ պատվաստվել էին մի քանի անգամ: Նա խոսել է նաև ջրծաղիկի դեմ պատվաստանյութի ապականված լինելու և դրա վատ ազդեցությունների մասին: 1800-ականների օրենքով շատ խմբեր պատվաստվում էին: Իսկ 2002 թվականի երեխաներին և մինչև 18 տարեկաններին թույլ չէր տրվում պատվաստում ստանալ, քանի որ նրանք պոկում էին վիրակապերը և իրենց բարեկամներին և ընկերներին ռիսկի ենթարկում: Սոցիալական պայմաններում մենք նկարագրեցինք «Լուծարելով պատրանքները» գիրքը, երբ չկար սանիտարական համակարգ, հակաբիոտիկներ, ստերիլ հագուստներ, բժիշկական բացառություններ: Ի՞նչ էք կարծում, ինչ էին անում երեխաները վիրակապերի հետ: Արդյո՞ք դրանք կանոնավոր փոխվում էին: Արդյո՞ք բոլորն արդյունավետորեն ստերիլացնում էին իրենց ձեռքերն օձառով: Ձեր մտքում պատկերացրեք տեսարանը: Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոնները այդ գաղափարից ետ էին կանգնել և այլևս ստեր չէին տարածում:

Ես պատմեցի 2002 թվականի պատվաստումներին իմ հրավերի մասին: Եվ ահա ինչ տեղի ունեցավ: Լրատվամիջոցները չէին անդրադառնում նախագահ Բուշի գովաբանած ծրագրին, քանի որ որոշում կայացնողները գիտեին, որ ջրծաղիկի դեմ պատվաստանյութը չափազանց վտանգավոր է և կարող է կասկածներ առաջացնել պատվաստանյութի ծրագրերի պատմության և շահութաբերության հարցում: Հիմա ակնհայտ է, որ Ամերիկայի ծնողները 1800-ականներից 1940-ական թվականներին ոտքի կանգնեցին ոչ թե այն պատճառով, որ նրանք հիմարներ էին, որ դեմ էին պատվաստումներին, այլ

այն պատճառով, որ նրանք գիտեին և փորձ էին ունեցել, երբ ջրծաղիկի պատվաստումները վնասել և սպանել էին իրենց երեխաներին: Բժշկությունը չէր ընդունում այդ փաստը: Միայն հարուստը իրեն թույլ կտա այսպիսի գեղեցիկ տապանաքարեր: 1800-ականներից սկսած աշխարհում յուրաքանչյուր երկիր ուներ պատվաստանյութերի դեմ ուղղված շարժում, նույնիսկ Հնդկաստանում, Ցեյլոնում և Աֆրիկական երկրներում: Ամենուր ծնողներին վրդովվեցնում էր այն փաստը, որ բռնի կերպով պատվաստումներ էին իրականացվում հին պատվաստանյութերով: Այսօր, երբ քննադատում եմ պատվաստանյութերը, ինձ շատ են հարցնում cowpox-ի մասին: Այսօր ես և Պոլին (Polly) մշտապես ենթարկվում ենք խելագար, ամբարտավան մեղանդրանքների, որ մենք պատրաստվում ենք ետ բերել ջրծաղիկը, քանի որ բացահայտել ենք պատվաստանյութերի մասին ճշմարտությունը:

Պատվաստումը դադարեցվել է ԱՄՆ-ում: Մեկ այլ դեպք էր տեղի ունեցել բժիշկ Բոննիի (Bonnie) հետ, ով պատվաստել էր իր ավագ եղբորը, և վերջինս մահացել էր ջրծաղիկից: Նա պատմել է, թե ինչու է այդքան երկար ժամանակ պահաջվել մինչև ջրծաղիկի դեմ պատվաստանյութը հանելը: Մենք գիտենք, որ դեղագործական ընկերությունները միշտ փորձում են օգտագործման եղանակներ գտնել օրֆան դեղերի (orphan drugs) համար, քանի որ նրանք ասում են այն դեղերը, որոնցից գումար չեն ստանում: Շուկայից դուրս եկած դեղը միշտ էլ ողբերգություն է իրենց համար: Ջրծաղիկի դեմ պատվաստումը, ենթադրվում է, որ դադարեցվել է 1971 թվականին, բայց այն շարունակվել է, քանի որ արտադրողները համոզել են բժիշկներին, որ այն կարող է օգտագործվել որպես կոշտուկների և հերպեսի դեմ բուժում:

Այսպիսով, 1978 թվականին ջրծաղիկի դեմ պատվաստանյութի 4,4 միլիոն չափաբաժին օգտագործվել է, և արդյունքում գրանցվել են մահվան դեպքեր: Այն վերջնականապես դադարեցվել է 1980-ականներին միայն 7 ամսական երեխայի մահվան դեպքից հետո: Ջրծաղիկի դեմ պատվաստանյութը օգտագործել է 3 ամիս կրկնվող հերպեսի սիմպլեքսը, բերանի բշտիկները բուժելու համար: Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոնների պլանավորողները վախեցան և որոշեցին արագ դադարեցնել ջրծաղիկի դեմ պատվաստման արշավը, դուրս հանել բոլոր պատվաստանյութերը, որոնք նախատեսված են եղել 2002 թվականի ավարտին բոլոր ամերիկացիների համար:



2008 թվականին՝ ժխտումից ավելի քան 100 տարի անց, հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոնները կարանտին հայտարարեցին և ոչնչացրեցին մնացած չոր պատվաստանյութերը: Ի՞նչ էին նրանք ցանկանում քողարկել: Պատվաստանյութի կողմնակիցները հանկարծակիի եկան, երբ ճշմարտությունը պատվաստանյութերի մասին ի հայտ եկավ: Ապականված cowpox-ը, ձիու քուկը, մուտանտ հիբրիդները վերացրեցին ջրծաղիկը երկրի երեսից:

Նրանք հրաժարվում էին ընդունել ապացույցները և փոխարենը հավատում էին բոլոր պատվաստանյութերին: Նրանք մտածում էին, որ հարյուր հազարավոր ծնողների, քաղաքական գործիչների կողմից ասված և գրված խոսքերը, նրանց կողմից 1889 թվականին դադարեցված պարտադիր պատվաստումները պարզապես պատմական աղբ էին: Այսօր ծնողները պետք է իմանան, որ պարտադիր պատվաստումների դադարումը 1889 թվականին տեղի ունեցավ պատվաստանյութերից տուժած երեխաների ծնողների շնորհիվ: Նրանք քաջ էին, բարձրաձայն արտահայտում էին իրենց տեսակետը, քվեարկում էին պատվաստանյութերին դեմ քաղաքական գործիչներին, մասնակցում տեղական և կառավարական ընտրություններին: Նրանց հեղափոխությունը պարտադիր պատվաստումների դեմ հաջողության հասավ այն դարաշրջանում, երբ չկար համացանց, ավտոմեքենաներ, ռադիո, հեռուստատեսություն, երբ մարդիկ աշխատում էին օրը 12 ժամ, երբեմն էլ շաբաթը 7 օր: Չկային ակումբներ և սրճարաններ, որտեղ երիտասարդ ծնողները կհավաքվեին և կխոսեին իրենց երեխաների առողջության մասին: Չկային այսպիսի համաժողովներ: Այս գրույցները տեղի են ունեցել Լեսթեր պատահական ուղևորությունների ժամանակ: Միլիոնավոր մարդիկ հիշել են հազարավոր երեխաների կրած վնասների և մահվան դեպքերի մասին և համաձայնության եկել: «Համայնքների տան» (House of Commons) շուրջ 100 քաղաքական գործիչներ աջակցել են այս ծնողների շահերին՝ բարեխղճորեն առարկելով պատվաստումների դեմ: Այդ ժամանակ ԱՄՆ-ում և Անգլիայում կային հարյուրավոր բժիշկներ և փաստաբաններ, ովքեր դեմ էին արտահայտվում ջրծաղիկի դեմ պատվաստմանը: Հայտնի բժիշկ Չարլզ Քրեյթոնը, դեմ լինելով (Charles Creighton) պատվաստումներին, գրել է բազմաթիվ հոդվածներ «Բրիտանիկա» հանրագիտարանի համար: Նրան հասանելի տեղեկատվությունը ջրծաղիկի մասին գրելու համար այնքան կասկածելի էր, որ նա ուսումնասիրեց հասանելի գիտական գրականությունը:

Նա եզրակացրեց, որ պատվաստանյութը չի կանխարգելում ջրծաղիկը: Իմ կարծիքով նրանք սխալ մարդու էին հանձնարարել գրել ջրծաղիկի մասին: Չնայած որ նա սև ցուցակում հայտնվեց և իր մասնագիտությունից հեռացվեց, 1881-1918 թվականներին, երբ Լոնդոնում էր, շարունակեց բժշկական իր հետաքննությունը և փրկեց հազարավոր կյանքեր: Նա իր վերջին տարիներն ապրել է մենակ, բայց համարձակություն է ունեցել ճշմարտությունն ասելու՝ հաշվի չառնելով իր համար վտանգավորության աստիճանը: Մյուս հայտնի բժիշկը Էդգար Քրուքշենքն (Edgar Crookshank) է: Ջեյմ Փաջեթը (James Paget) հանձնարարել էր նրան աշխատանք գրել, և զայրացել էր, երբ նա երդվել էր, որ կբացահայտի նրա խարդախությունները: Նրա հետազոտությունը 1889 թվականին հրատարակվեց 610 էջանոց գրքում: Այն ամբողջությամբ մոտ էր Քրեյթոնի մոտեցմանը: Նրա աշխատանքը բժշկության կողմից մոռացության մատնվեց:

Այսպիսով, ինչու՞ են պատվաստանյութերի կոմնակիցներն ասում, որ մեր նման բժիշկները ետ կբերեն ջրծաղիկը: Ինչու՞ նրանք կանգ չեն առնում և մտածում, թե մենք, կատարելով հետազոտություններ, ինչ ունենք ասելու ջրծաղիկի և նրա պատմության մասին, ինչի մասին հնարավոր է երբեք չեն իմացել: Ես խոսում եմ պատճառների մասին իմ You Tube տեսանյութում, որը կոչվում է «Ազնվություն և քաղաքականություն» (Honesty vs. Policy): Այդ տեսանյութում ներկայացրել եմ մի քանի նախաձեռնողների և փոքրամասնություն կազմող մարդկանց, ովքեր քաջություն են ունեցել բարձրացնել իրենց իրավունքները: Նրանցից մեկը Գրեհեմ Վիլսոնն (Graham Wilson) է, ով բարձր գնահատված բժիշկ էր: Նա գրել է «Պատվաստման վտանգները» (Hazards of immunization): Վիլսոնն ասել է, որ չէր գրի այս գիրքը առանց Burroughs Welcome Fund-ի նախկին տնօրենի, ով նրան տվել էր տարբեր պատվաստանյութերի հիվանդությունների մասին գրառումներ: Երբ նա կորցնելու բան չունեի, ասաց, որ այս հիվանդությունները երբեք չեն քննարկվել հանրության և բժշկական համալսարանների կողմից: Պատվաստումներին դեմ գնացողների շատ քիչ հրապարակումների, քննարկումների արդյունքում շատ բժիշկներ չեն իմացել, որ պատմությունը լցված է եղել ջրծաղիկի դեմ պատվաստանյութից առաջացած հիվանդություններով:

Երկար ժամանակ պատվաստանյութերի մասին իրականությունն անտեսելու պատճառով ժխտման քաղաքականությունը շարունակվում է մեր

կյանքում: Մենդի և դեղերի վարչությունը հաղորդում է, որ կասկած չկա պատվաստանյութերի ապահովության հարցում, քանի որ կարիք կա հավաստիանալու, որ բոլոր պատվաստանյութերը կօգտագործվեն հնարավոր առավելագույն չափով: Եվ այս պատճառով էլ ոչ լիովին պատվաստված մարդը երբեք չի պատվաստվում: Ուսումնասիրությունը հրապարակվել է բարձր ազդեցություն ունեցող հիմնական բժշկական ամսագրում: Եվ սրա համար մենք երախտապարտ ենք բժիշկ Մոսին (Moss): Հնարավորության չափով հասարակությանը պահում էին խավարի մեջ, բժշկական համալսարանի բժիշկներն անտեսում էին ճշմարտությունը, իրական գիտությունը: Պատվաստումների դեմ ելած մարդկանց պատմական և ակադեմիական ապացույցը բժիշկներին անկարող էր դարձնում ծնողներին տրամադրել տեղեկատվական համաձայնությունը, պատմել ճշմարտությունը կամ բանավիճել կրթված ծնողների հետ:

Ինչպես ձեզանից շատերը գիտեն, բժիշկները խիստ պայմանավորված են միշտ հավատալ և ասել, որ պատվաստանյութի ռեակցիաները համընկնումներ են: Նրանք համարում էին Պաուլ Օֆֆիթի ասածներն անմտություն: Օրինակ այն, որ այլումինը հիմնական մետաղ է համարվում իր ճկունությամբ և բնականորեն տատանվում է նորմալ բջջային գործունեության ընթացքում: Այն հայտնաբերվում է բոլոր հյուսվածքներում և հավատում էին, որ այն կարևոր դեր ունի առողջ սաղմի զարգաման հարցում: Եվ սա ընդունված մոլորություն էր Օֆֆիթի կողմից: Աուտիզմը իմունային միջնորդությամբ հիվանդություն չէ, հակառակ աուտոիմունային հիվանդությունների, օրինակ՝ բազմակի սկլերոզի: Ապացույց չկա, որ աուտիզմ ունեցող մարդկանց կենտրոնական նյարդային համակարգում (CNS) իմունային ակտիվացում և բորբոքային վնասվածքներ կան: Ընդհակառակը կան ապացույցներ, որոնք հայտնաբերվել են դիակների բժշկական փորձերի արդյունքում: Աուտիզմ ունեցող մարդկանց մոտ բորբոքային վնասվածքները նկարում գունավորված են: Կա ապացույց ուղեղի բորբոքման մասին: Ես հավատում եմ, որ այս ապացույցի պատճառով էլ բժիշկները ծնողներին չեն տրամադրում պատվաստանյութի մասին տվյալների թերթիկ, որը գալիս է յուրաքանչյուր պատվաստանյութի հետ: Այն նույնիսկ բժիշկները չեն կարդում: Նրանք կատարում են ամեն ինչ ըստ սահմանված կարգի, հավաքում են վճարումները, շարունակում լինել «փոքր խելոք շնիկներ», և լսել քահանայապետին, օրինակ Մայո կլինիկայի Ռոբերտ Ջակոբսոնին (Robert Jacobson), ով բացահայտ ասում էր նրանց ծնողներին տեղեկատվություն չտալ: Բժիշկների տեղեկատվական աղբյուրները, որոնք

օգտագործում են հիվանդներին խորհուրդներ տալու համար, նման չեն նրան, ինչ այսօր լսեցիք այստեղ: Աղբյուրներից մեկը հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոնների կայքէջն է, որտեղ կա շատ քիչ քանակությամբ գիտական ապացույց, կամ էլ այն բացակայում է: 2003 թվականին Իլինոյսի բժիշկներին տրված տեղեկատվության համաձայնությունը ջրծաղիկի թեկնածուների համար այն է, ինչ պետք է տրվեր բոլոր ծնողներին՝ հաշվի առնելով կամավորական պատվաստումը: Բայց մենք գիտենք, որ այդ ամենը կներշնչեր կասկածներ: Նրանք, ովքեր նայել են իմ ներկայացումները (մասնավորապես՝ Vaccines forever, Manufactured consent), կիմանան իմ հիսաթափության աստիճանը պատվաստանյութերի՝ երբեք չվերջացող և աճող թվերի հանդեպ: 1938 թվականին բժիշկ Չարլզ Կիրիլ Օկելը (Charles Cyril Okell) Լանցետում գրեց հոդված պատվաստումների մասին: Վերնագիրը (Grains and scruples) հետաքրքիր էր: Հնչում էր ինչպես առակ կամ ճշմարտության զգուշացում:

Որպես բժշկական համալսարանի ուսանողներ և բժիշկներ՝ մենք ուսուցում չէինք ստանում հարգված և հայտնի այն բժիշկների կողմից, ովքեր պատվաստման մասին անմտություններ էին պատմում, համեմատում այն արյունահոսության ոլորտի հետ՝ կոչելով սնահավատություն, շառլատանություն: Մեզ չեն սովորեցրել պատվաստման կրոնին հետևել, ինչը հանգեցնում է մահերի: Բժիշկ Օկելը գրել էր, որ նրանց հանգստացնում է այն փաստը, որ հասարակությունը բավականաչափ չի հետաքրքրվում հետաքննություն պահանջելու համար: Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոնները 2003 թվականին թողել են, որ ջրծաղիկը բնական կերպով ձախողվի, որպեսզի հասարակությունը չտեսնի և չսի ճշմարտությունը և պահանջի հետաքննություն: Նրա հիսաթափությունը առաջացել է իր բժշկական փորձառության ժամանակ, երբ կարմրախտով երեխան տոքսիններով ներարկում է ստացել: Նա տեսել է նաև, որ ոչ այնքան առողջ երեխաների պատվաստումը հանգեցրել է մեծ վշտի: Մի կողմ թողնելով այս ամենը՝ նա շարունակեց կատարել զարմանալի հետազոտություններ, որոնց մասին կխոսեմ այսօր:

Օկելն ասել է, որ ժողովրդի պատվաստումը ձեռնարկվել է կրոնավոր խանդավառների կողմից: Էնտուզիաստները հազվադեպ են դադար առել և մտածել, թե ինչով այս ամենը կավարտվի, կամ արդյոք հասարակությանը տրված խոստումները՝ քարոզչության տեսքով, կարդարացվեն: Առանց

քարոզչության լայնածավալ պատվաստումներ չէին լինի: Ինչքան վտանագավոր է միքսել քարոզչությունը գիտության հետ: Եթե մենք պատմած լինեինք ճշմարտությունը, արդյո՞ք հասարակությունը պատվաստումներ կստանար: Մտածեք այդ մասին, քանի որ այդ պատճառով 2003 թվականին հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոնները չչարունակեցին ջրծաղիկի դեմ պատվաստման ծրագիրը: Օկելն ասում էր, որ երբ ներարկում ենք առողջ մարդուն, մենք միշտ սահում ենք սառույցի վրայով և ապա ընկնում:

Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոնները 2003 թվականին հասկացել էին ջրծաղիկի դեմ պատվաստանյութերի մասին ճշմարտությունը: Օկելն ասում էր, որ դեպքերն ու սխալներն անխուսափելի են, երբ դրանք տեղի են ունենում, դրանցից վերցրած ուսանելի դասը ճնշվում է և աղավաղվում: Մա գրվել է 1938 թվականին, բայց այն նաև արդիական է 2017 թվականի համար: Օկելն ասել է, որ ճշմարտությունը իմանալու համար, թե ինչն այն չի գնացել, սովորաբար անհրաժեշտ են աղբյուրներ, օրինակ գաղտնի ծառայությունը: Մինչև 2017 թվականը մենք տեսել ենք մի շարք քավության նոխազներ: Օկելն ասում էր, որ պատվաստման արդյունքում հիվանդությունների աստիճանական աճը մեզ բերում է մի փուլի, որտեղ մենք ստիպված ենք ընտրություն կատարել: Արդյո՞ք ես պետք է պատվաստվեմ ջրծաղիկի, դիֆթերիայի, տիֆի դեմ, թե՞ պետք է ընտրեմ գրիպի, մրսածության, կարմրախտի համար հին մեթոդները: Ձեզանից շատերը հնարավոր է, որ չգիտեն, որ 1938 թվականին գրիպի, մրսածության, ջրծաղիկի դեմ պատվաստումների հին մեթոդներ են եղել և հանվել են շուկայից, քանի որ բուժքույրերի, բժշկական անձնակազմի մոտ ռեակցիաներ են առաջացել: Այսօր շատ քիչ մարդիկ այդ մասին գիտեն:

Բեննին (Bennie) ասում էր, որ եթե մարդը չի ցանկանում տատու անել ոտքից մինչև գլուխ ներարկման միջոցով կամ դուրս գալ բժերով, ինչպես քամելոները, նա դադար կառնի: Նա սրտնեղում էր՝ զարմանալով, արդյոք երբևէ կկարողանանք վերացնել մարդկային հիվանդությունը: Նա գիտեր, որ յուրաքանչյուր պատվաստանյութ դժվար շրջան է ունենում մինչև քարոզչությունը: Նա նշում է, որ մարդը պետք է որոշի պատվաստում ստանալ, թե ոչ, օրենքը, հանրային առողջությունը չպետք է նրան ստիպեն: Չնայած նա վարակիչ հիվանդությունների ասպարեզում բարձր վարկանիշ ունեցող մասնագետ է և «Լանցետում» մշտապես հրապարակում է իր հողվածները, բայց

այսօր նրան համարում են հիմար խաբեբա, դավադրության տեսաբան: «Լանցետն» այլևս չի հրապարակում պատվաստանյութերի բացասական կողմերի մասին տեղեկատվություն: Ըստ նրա՝ եթե ցանկանում եք պատվաստման ընտրությունն ինքներդ կայացնել, ինչպես 1881 թվականին Լեսթերի ծնողները պայքարեցին, պետք է կրթեք ձեզ, պատրաստ լինեք քննադատության և մյուսներին ստիպեք մտածել: Եթե մենք քաղաքական փոփոխություն ենք ուզում, այն չպետք է թողնենք մի քանի հոգու հույսին: Յուրաքանչյուրը պետք է առաջ գնա և պայքարի: Բոլոր բժիշկները պետք է կատարեն իրենց պարտքը հիվանդների հանդեպ, մտահոգվեն նրանց համար, սա է նշանակում լինել լավ բժիշկ: Այդպիսի բժիշկներ են Օկելը, Քրեյթոնը, Մոսը (Moss), Ֆրանզը (Franz): Երբ մենք տեսնում ենք ճշմարտությունը, ինչը մենք չգիտեինք, հասկանում ենք, որ մեր անտեղյակության պատճառով ցավ ենք պատճառել մարդկանց: Փոփոխություն կատարելու լավագույն տարբերակը հիմա խոսելն է: Ամենալավ մոտիվացնող մարդկանցից են նրանք, ովքեր ժամանակին սխալ են գործել և ապա հեռացել են «բորբոսից», որ համակարգը փորձում էր տարածել: Ինչ վերաբերվում է ծնողներին, հիշեք, որ Լեսթերի ծնողներն էին, որ հաղթանակ տարան, նրանց նման այսօրվա ծնողները կարող են անել նույնը: